



ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ՈՐՈՒԵՍԱԳԻՏՈՒԿԱՆ

Ի Գ. ՅԱՐԻ 1909

Տարեկան 15 ֆր. ոսկի — 6 դր.:
Վերամենայ՝ 8 ֆր. ոսկի — 3 դր.:
Մեկ թիւ կարճե 150 ֆր. — 70 կ.:

ԹԻԻ 3՝ ՍԱՐՑ

Ս Ա Ց Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՄԻԹԵՐ ԳՅՈՒ ԳԱՏԱՅԱՆՈՒԹԻՐԷ ՆԻ ՀԱՅՈՑ
ՀԻՆ ՔԱՂԱՔՈՅԹԵԱՆ ԻՐԱՆՈՒԹԷ

ՀԱՏՈՒՆԵՐ ԵՐՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՆՈՒԹԷ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԸՆԴՈՒՄՆԱԿԱՆ ԻՐԱՆՈՒԹԷ:

Ա.

ԱՄԱՆՈՒՄՆԱԿԱՆ ԻՐԱՆՈՒԹԷ:

(ԸՆԴՈՒՄՆԱԿԱՆ ԻՐԱՆՈՒԹԷ)

IV.

ԱՄԱՆՈՒՄՆԱԿԱՆ ԻՐԱՆՈՒԹԷ:



ամսնութիւն ընդհան-
րապէս կարող է լուծուիլ
կամ քննադատել կամ
պատշաճօրէն միջոցով:

Բնական լուծումն տեղի
է ունենում, երբ ամուսին-
ներից մէկը գոյութիւն

իրականօրէն վերջացած է: Այստեղ, նախ եւ
առաջ՝ պէտք է՝ ինկատի առնել, որ ամուսնացած-
ների մէկը ամուսնութիւնն ինքն իրաւ իրեն հաշ-
ուում է: Միևիմար Գօշը իւր Գատատանագրքի

մէջ առանձնապէս ոչ մի տեղ չի խօսում, թէ
մահուամբ վերջանում է ամուսնութիւնն եւ եթէ
վերջանում է, քանի ժամանակից յետոյ այրին
իրաւունք ունի վերստին պսակուելու: Գերեւս
այդ լուծութիւնն բացատրելի է նրանով, որ ա-
մուսնութեան այդ տեսակ լուծումն առանց այն
էլ պարզ է եւ կամ՝ սա աւելի հաւանական է՝
որ այդ հարցի վերաբերմամբ արդէն վաղուց ի
վեր հայ եկեղեցին վարում էր իւր նախա-
հայրերի որոշումներով: Սակայն մի տեղ
(I, գլ. Ժգ.) Մի. Գօշը ասում է. եթէ այլը
վաճառականական կամ այլ գործերով ճանա-
պարհուել է օտար երկիր եւ այնտեղ մեռել,
նրա կինն միմիայն չ'տարուց յետոյ իրաւունք
ունի ամուսնանալու: Հետեւապէս այդ ժամանա-
կուայ ընթացքում նախկին ամուսնութիւնն,
նոյն իսկ մարդու մահուամբ յընթացս չ'տարու-
թիկուի կերպով պահպանում է իւր գոյու-
թիւնը:

Երկրորդ՝ պէտք է ի նկատի առնել ա-
մուսնութեան մէկի անհետացում: Անհետացում
կարող է կատարուել կամ գերութեամբ եւ
կամ օտար երկրներ գնալով, ուր մեռում են
առանց վերադառնալու եւ իրենց գոյութեան
մասին ոչ մի տեղեկութիւն չեն տալիս: Երբ
ամուսնութեանց մէկը գերի է ընկնել, միւսը պար-
տաւոր է յընթացս չ'տարու ոչ միայն սպասել,
այլ եւ որոնել, ամեն ճիգ թափել միայն
գտնելու եւ աշխատելու: Եթէ չ'տարուայ ըն-
թացքում չ'վերադառնա՝ գերին, այն ժամանակ

ամուսնութիւնը լուծուած է համարուում: Վերջին գէպքում պահպանուում է նաեւ երկու կողմերի համաձայնութեան անհրաժեշտութիւնը. օրինակ, եթէ կինն է գերի տարուել, ամուսինն 7 տարի ապարդիւն սպասելուց յետոյ կարող է լուծել ամուսնութիւնն եւ նորոգ պատկուել ուրիշի հետ միմայն իւր նախկին կնոջ ծնողներէ համաձայնութեամբ: Կոյնը կատարուում է եւ հակառակ կողմի համար, երբ գերի է ընկել այլու (I, գլ. Է, 27):

Երբ այլը որեւէ անհատական գործերով գնացել է օտար երկիր եւ այնտեղ պատկուել, եւ կինը 7 տարի սպասելուց յետոյ, իմանում է այդ, եւ եթէ հաստատուում է, որ այլը այլ եւս վերադառնալու մտադրութիւն չունի, այն ժամանակ առաջին ամուսնութիւնն լուծուում է եւ կինը իրաւունք ունի նոր ամուսին վերցնելու (I, գլ. ԺԲ):

Դառնանք երկրորդ կէտին՝ աղահալածին, երբ ամուսնութիւնն լուծուում է երկու կողմերի ներկայութեամբ: Այս գէպքում կարող են գեր խաղալ հետեւեալ հանգամանքները, որոնք կազմում են լուծման հիմք:

1. Փոխաբան համայնութեան ամուսնութիւն լուծելը Մխթար Գօշը չի ընդունում: Այս կէտում նա միանգամայն եկեղեցական օրէնքների ազդեցութեան ներքոյ է: Եւ եթէ նա ընդունում է փոխաբան համաձայնութեան սկզբունքը ապահարգանի մէջ, այն էլ այնպիսի պայմաններում, երբ այդ լուծումն ինքն ըստ ինքեան Դատաստանագրքի յօդուածների հիման վրայ կարող է տեղի ունենալ: Յիրաւի, գրեթէ այն բոլոր յօդուածները, որոնք մանրամասնորեն որոշում են, թէ ինչ պատճառներից ու հիմքերից կարող են ամուսնութիւնները այր եւ կնոջ ներկայութեամբ կազմալոյծ լինել, պարունակում են իրենց մէջ նաեւ մի կէտ, որ այդ ապահարգանն պէտք է փոխադարձ համաձայնութեամբ լինի: Այստեղ կարծես մի փոքր հակասութիւն է առաջ գալիս: Մի կողմից՝ հիմնական պատճառներ, որոնք ըստ օրէնքի թոյլատրում են ապահարգան, միւս կողմից՝ փոխադարձ համաձայնութեան անհրաժեշտութիւնը, որը եթէ չկայանայ, ուրեմն չնայած ապահարգանի իրական հիմքերի գոյութեանը, լուծման հարցն ինքն ըստ ինքեան տապալում է ու անհետեւանք մնում:

2. Օրինակ աղահալածի, որոնց գոյութեամբ ամուսնական կապակցութիւնը դառնում

է աննպատակ ու միանգամայն փասակար ոչ միայն երկու կողմերի այլ եւ ապագայ ծնունդների համար: Առաջ բերենք այն օրինակները, որոնց յիշում է Դատաստանագիրքը:

ա. Առնիւն անհաղածին, երբ ամուսինն անընդունակ է լինում կնոջ կուսութիւն խախտել եւ ֆիզիկական գուրկ է առնական ընդունակութիւնից (I, գլ. Ե, 28):

բ. Զաւառն Գորգինի հետեւեալին՝ — Զաւր Խոբէր. այստեղից, որգողութիւն, բորոտութիւն, հաշմութիւն եւ այլն: Այս հանգամանքներում Դատաստանագիրքը երկու մասնետ է 'ի նկատի առնում. արդեօք ախտը երեւան է եկել պատկից յետոյ, թէ՛ գոյութիւն է ունեցել պատկից առաջ ու ծածկուել ա՛մուսնացող կողմից: Վերջին գէպքերում հիւսնադր պէտք է բժշկուի եւ միւս կողմը 7 տարի սպասի: Եթէ այդ ամանակամիջոցում հիւսնադր չառողջացաւ, կողակիցը լուծում է փոխադարձ համաձայնութեամբ պատկը եւ բաժանուողի թոյլատրութեամբ կարող է մի ուրիշի հետ պատկուել: Այն գէպքերում, երբ ծածկած ախտը երեւան է գալիս պատկից յետոյ, առողջ կողմը իրաւունք ունի ապահարգան պահանջելու եւ առանց սպասելու հիւսնադր բժշկուելուն, վերստին ինքնակամ ամուսնանալ (I, գլ. Զ, 2Է, 2Ը):

գ. Արնիւն: Ամուսնութեան գէպքում երբ ձեռնարկած բժշկական միջոցները 'ի գերիւս են իշնում, առ նուազն 7 տարի սպասելուց յետոյ կարող են բաժանուել: Այնք կարող է նորից պատկուել, հակառակ գէպքում պէտք է ապրի, որպէս այրի. նոյնն է վերաբերում նաեւ մարդուն: Ապահարգանն անկարելի է «եթէ կանխաւ գիտացել զամուսնութիւնն եւ տոբանք առնուցու ջանկութեամբ, մի՛ լիցի մինչ 'ի մահ մեկնիլ»: Դատաստանագրքի հեղինակը, հիմնուելով այն վճռի վրայ, որ «Արաբընն է զննութեան տալ զծնունդ», փորձում է հաւտեցնել երկու կողմերը իրականութեան հետ եւ խորհուրդ է տալիս չարձակել կնոյն: Հետաքրքրիկն այն է, որ Մխթար Գօշը ամուսնութեան պատճառները տեսնում է, երեւի հետեւելով ժողովրդական անտիապաշտութիւններին, գրեթէ միշտ կնոջ անձնատրութեան մէջ (I, գլ. Ժ, 2Ե, ԳԴ):

դ. Զահալածին: Երբ ոչ անգիտանալով, այլ յամուսնութեամբ պատկուել են այնպիսի պայմաններում, որոնք չեն համապատասխանում Դատաստանագրքի որոշուածներին ազգակցութեան ու ինամութեան աստիճանների նկատմամբ:

պատկեր անվաներ եւ համարուում՝ եւ պահանջուում եւ լուծուած: Մանաւանդ առաւել եւս Մխիթար Գօշը պահանջում է քանդել ամուսնութիւնը: Թէ երկու ի մի կողմանէ իցէ եւ մի ի միւր եւ թէ մին ի միւր կողմանէ իցէ, մին ի միւր: (I, գլ. 28):

Ե. Ուրացոյնիւն եւ Երեւոյնիւն: Գործապէս Մխիթար Մանուկ թիւններ են, որոնք անհար են կացուցանում արանց ու կանանց փոխադարձ ընտանեկան յարաբերութիւններն, որովհետեւ նորաք ըստ Մխիթար Գօշի “պատրեալ ի սատանայէ եւ ի նորին արքանեակաց” են: Արին իրաւունք չունի ապրելու իւր ուրացող ամուսնու հետ, թեկուզ վերջինս բուն յոյժով ստիպէ այդ անել: Հետեւապէս լուծուում է ամուսնութիւնն: Նմանապէս կնոջ ուրացութեան ժամանակ պէտք է վարուի մարդը: Վերջինից տրամաբանօրէն կարելի է եզրակացնել, որ ըստ Մխիթար Գօշի անվանք են ճանաչելու քրիստոնեայի եւ ոչ-քրիստոնեայի միջին ամուսնութիւնն (I, գլ. 29):

3. Անհոգութիւնը: Գործառնելէ շարքին ենք դասում այն բոլոր գէպքերը, որոնք անձնական բնոյթից ու առանձնայատկութիւններից են առաջանում: Արանք ներքին բնաւորութիւն են կրում եւ հետեւեալներն են:

ա. Փոխադրութիւնը: Գործառնելէ շարքին ենք դասում այն անունը եւ տարին: Այստեղ էլ երկու մանրէն է նկատի առնուում, եթէ ամուսնութեան սկիզբը գոյութիւն է ունեցել տակաւին նախ քան ամուսնութիւնն եւ մարդու կողմից է, որ ոչ կամից յարմարել ընդ նմա, քակուում է ամուսնութիւնն “գինի բազում խրատու եւ յանդիմանութեան”, Այր մարդ այս բաժանումից յետոյ իրաւունք չունի վերադառնալ ամուսնանալու: Նոյնն է եւ կնոջ վերաբերմամբ: Եթէ արա կողմից լինի ամուսնութեան արտը, նմանապէս զգուշացում է երկրորդ անգամ պատկուելու իրաւունքից: Բայց երբ “գիւղական արտը” առաջանայ պատկից կամ որդի ունենալուց յետոյ, պէտք է աշխատել “խրատուք ու յանդիմանութեան”, սանձահարել եւ երբ ապարդիւն լինի, այն ժամանակ լուծել ամուսնութիւնն: Եթէ այրն էր մեղաւոր, իրաւունք ունի ամուսնութեան քակումից յետոյ վերադառնալ միմիայն նախկին կնոջ թոյլտուութեամբ: Նմանապէս ապահովանքի շարժառիթը

եթէ կնոջ կողմից էր, վերջինս կարող է ամուսնանալ միայն իւր նախկին ամուսնու թոյլտուութեամբ (I, գլ. 29):

բ. Անհոգութիւնը: Եթէ կնոն անհոգութիւն է, պոռնիկ է, ամուսինն իրաւունք ունի արձակել նրան: Այս բաժանումից յետոյ, կնոն անկարող է երկրորդ անգամ ամուսնանալ, իսկ այրն ընդհանրապէս: Երբ շնացող այր մարդն է, կնոյ պարտաւոր է մնալ ամուսնու մօտ “վան խրատու”, թեկուզ այն յոյսով, որ գուցէ ամուսինն կարգի գայ (I, գլ. 30): Նոյն անբարոյականութեան շարքին են դասուում կնոջ կախարդութիւնն, “գեղատուութիւնն եւ այլոց այսպիսեաց”, չարագործութիւնն (I, գլ. 31): Ամուսնու արուագիտութեան կամ անանագիտութեան գէպքերում, կնոն իրաւունք ունի հեռանալ, թէ եւ մարդու զղմամբ կարող է կրկին վերադառնալ ու հաշտուելով շարունակել ամուսնական կեանքը: Հակառակ գէպքում, մանաւանդ երբ հաշտութիւնից յետոյ մարդը շարունակի իւր նախկին մոլութիւնները, միանգամայն լուծուում է ամուսնութիւնն (I, գլ. 32, 33, 34): Եթէ պատկի գիշերը յայտնուի, որ կնոյ կոյս չի եղել, այրը տէր է արձակելու կնոջ: Այս պատկի լուծմանից յետոյ, երկու կողմերն էլ իրաւունք ունին երկրորդ ամուսնութիւն մտնելու: “Եւ այրն եթէ արձակի իշխան է առնուլ կին, եւ կինն՝ այր: Գի ոչ ընդ օրինք առնն նապաս” (I, գլ. 35):

գ. Խառնութիւնը: Եթէ այրն անհոգ ընտելութեան տէր է եւ մանաւանդ, երբ սկսի կնոյ ոտքը, ձեռքը, աչքը եւ մարմնի այլ մասերը խեղաթիւրել եւ դա յամուսնութեամբ շարունակելով, վտանգ է սպառնում կնոյ կեանքին, այն ժամանակ այրն “յետ բազում խրատու եւ յանդիմանութեան”, արձակուում է ամուսնութիւնից (I, գլ. 36):

Երբ այրմարդը առանց որեւէ պատճառի թողնում է կնոյն, անհոգ գտնուելով գէպ իւր պարտականութիւնները, կնոն 7 տարի ապարդիւն համբերելուց յետոյ կարող է բաժանուել մարդուց, վերապահելով մի կողմից՝ իրեն լրակատար իրաւունք նոր ամուսնութեան եւ միւս կողմից՝ “խղճահարութիւնից” իրաւունք տալ իւր բաժանուած մարդուն էլ երկրորդ անգամ պատկուելու: Հակառակ գէպքում՝ առանց այդ թոյլտուութեան ամուսինն անկարող է վերադառնալ կին առնելու (I, գլ. 37, 38):

Մեզ արգէն յայտնի է նախնականից, որ հայոց մէջ նշանագրութիւնն նոյն ոյժն ու զօրն

1 Համար. “Նախնական Բաժանումից Թ. 1. Երկուստեք մի այն յոգանքի III, գլ. 1. Ամուսնութեան զուգործութիւն, որ աւելի մտքորոշանքն է լուծուում հաստատութեան հարցը:

թիւնն ունի, ինչ որ պատկազրութիւնն: Այս հիման վրայ, նշանախօսներէն դասելով ամուսնացածների շարքը, հասկանալի է, որ գրեթէ նոյն կանոնները, որոնք գործադրելի են ամուսնութեանց լուծման դէպքերում, վերապահելի են նաեւ նշանախօսութիւն կամ նշանագրութիւն լուծելու համար: Յիշուի, դատաստանագրքի մէջ բերուած են, թէեւ ոչ Մխիթար Գօշի հեղինակած, երկու յօդուած, որոնք վերաբերում են նշանուածների բաժանմանը: Ով քահանայի ու երէք վկայի հաստատութեամբ նշան է տուել, կարող է լուծել իւր նշանախօսութիւնն միայն այն դէպքում, երբ հարսնացուն յայտնուի գտնելի կամ մարմնազեղծ (I, գլ. 22)¹: Նմանապէս, եթէ յայտնուեն աղէկայ "չար գործք", փեսացուն նախ քան եկեղեցի մտնելը, տէր է հրաժարուելու իսպառ պսակից (I, գլ. 9)²:

Ամուսնական լուծման հարցին վերաբերելով բոլոր վերոյիշեալ յօդուածները, ինչպէս տեսնում ենք բաւական ազատամիտ են խմբագրուած ու զգալի գիւրութիւններ են տալիս ապահարգանի համար: Մինչդեռ, ուշագրութեան անկելով քրիստոնէական, մանաւանդ հայ եկեղեցու ոգին, պէտք է հակառակն սպասելիք: Եւս առաւել, որ Մխիթար Գօշը ինքն էլ մի հոգեւորական էր: Ըստ հայ եկեղեցու դաւանութեան, ամուսնութիւնը մի խորհուրդ է, որով զուգահեռ ողները պարտաւորում են Աստուծոյ առաջ անբակտ ապրել միասին, "մի հոգի ու մի մարմին" կազմելով, տանել ամբողջ կեանքը իւր զրկանքներով, իւր ուրախութիւններով: Կարծես Մխիթար Գօշն էլ զգում է իւր այդ ազատամտութիւնն եւ տեղ տեղ նոյն հարցերի վերաբերումով, որոնց մասին արդէն մի անգամ խօսել էր իւր յօդուած յօդուածներում, դատաստանագրքի մէջ մտնում է ուրիշ նման, բայց մի փոքր խիստ խմբագրուած կանոններ, զիլաւորապէս վերցրած հայ եկեղեցական ժողովների որոշումներից: Զօր օրինակ՝ ամուսնեան հարցի վերաբերմամբ դատաստանագրքի մէջ գտնում ենք երկու յօդուած. մէկը Մխիթար Գօշինը — Ժ յօդ., եւ միւսը՝ Գ. Գ. յօդ., վերջում Շահապիվանի ժողովի եւրդ կանոնից. կամ ասոնալի անկարողութեան մասին գտնում ենք ԶԶ-րդ յօդ., վերջում Ս. Ամանասի Ի. կանոնից, եւ միւսը՝

Եւրդ յօդ., որի խմբագրութիւնն պատկանում է Մխիթար Գօշին: Այսպիսի նման օրինակներ բաւականի շատ են, որոնց յիշատակելը աւելորդ կը համարուէ: Այդ բոլոր դէպքերում, Մխիթար Գօշն իւր ինդիւն արդարացնելու համար հարցի որոշումը վերապահում է դատաստանների անձնական կարծիքներին. "եւ զի յայտ արասցուք, թէ կամ մեր ոչ զհակառակ կամի կանոնաց — թէ կամք լինի դատաւորաց այլց առնուլ ինչ 'ի մերոցն' առցէ, ապա թէ ոչ" կանոնք հաստատուն կացցէ" (I, գլ. 13):

Միւս կողմից՝ Մխիթար Գօշի օրէնքները իրենց ազատամտութեամբ հանդերձ, ապահարգանքով հարցը միանգամայն ամուսինների փոխադարձ համաձայնութեանը թողնելով, մի տեսակ հաշտեցնում են իրենց բովանդակութեան իմաստը եկեղեցական կանոնների հետ: Ամուսինները կարող են քակտել իրենց կապն ու կենսակցութիւնը այն ժամանակ միայն, երբ նրանք բոլոր միջոցներ ձեռք էին առել իրենց կեանքը միասին շարունակելու, այսինքն իրագործելու այն, ինչ որ նրանց վրայ, իւր պարտաւորեցուցիչ լուծ, գրել էր եկեղեցական խորհուրդը, բայց երբ այդ բոլոր ջանքերը ապարդին են անցել: Ահա այս դէպքում միայն նշանախօսութիւն են տեսնում. դատաստանագրքի որոշումները:

Բ.

Նշանախօսութիւն:

Այն բոլոր յօդուածները, որոնք վերաբերում են ծնողական ու որդիական փոխադարձ յարաբերութիւնների հարցին, շատ քիչ են, եւ եղաններն էլ խիստ անբաւարար, նոյն իսկ անորոշ կերպով են սահմանում այդ իրաւունքը: Մխիթար Գօշը բազմաթիւ հարցեր, որոնք ահամիտ կարող են բարձրանալ, եթէ ինչ թէ շատ թեթեւակի քննելը ընտանիք կազմող մեծերի ու փոքրերի իրաւունքները թողնում է անշօշափելի: Սրա պատճառը կարելի է բացատրել միմիայն այն արտասովոր կազմով, որը հայկական ընտանիքի յատկանիշն է: Ննչպէս արդէն քանիցս յիշել ենք, հայական ընտանիքը, նոյն իսկ մեր օրերում, ուրեմն եւս առաւել 7—8 դար սրանից առաջ, պահպանում էր նահապետական սկզբունքների վրայ: Ցանտէրը կամ տան մեծը, պապը ընտանիքի ներկայացուցիչն էր, անձնական ու ընտանիքային յարաբերութիւնների լիազօրը: Նա էր, ինչպէս հռոմէացիներն էին ասում, persona

1 Սուրբ Բարսեղի IV կանոնը:

2 Սուրբ Բարսեղի V-ի կանոնը:

sui iuris: Ընտանիքի միւս անդամները, նոյն իսկ արդէն հայր եղած, ամուսնացած զաւակները, գտնուում էին իրենց հօր, այդ տան մեծն իրաւասութեան ներքոյ, ընթարկուում էին հօրաւան իրաւունքին, իշխանութեանը, patria potestasին: Ընտանիքի այդ անդամները զուրկ էին որեւէ արտաքին, սեփական իրաւունքից, սրանք միայն, ըստ հռոմէական իրաւունքի, persona alieni iuris էին. այսինքն ուրիշ իրաւունքի ներկայ գէպքում տան հօր, պապի իրաւունքի ներքոյ գտնուած անձեր: Այսպիսի ընտանեկան կազմը, որ շատ ու շատ հին ժամանակներից է իւր գոյութիւնն սկսել եւ զարեքի ընթացքում զարգանում ու պահպանուում էր որոշ աւանդներով, արագիցիաներով, որոնք, սերունդէ սերունդ անցնելով, ծաղկեցնում էին սոցիոլոգիական իրաւունքի գործառնութիւնն: Ահա այս վերջին հանգամանքի շնորհիւ, երեւի Միտիթար Գօշը գրեթէ թեթեւակի է շոյափում ծնողական ու որդիական փոխադարձ յարաբերութիւնները: Այնտեղ, ուր սոցիոլոգիական իրաւունքը մշակել է մի շարք կարգեր, որոնց վրայ է հիմնուել հայկական գերդաստանը, կարգեր, որոնք սրբագործուել են զարեքի ընթացքում, անյուշտ Դատաստանագրքի հեղինակը աւելորդ է համարել իւր կողմից բան աւելացնել կամ արձանագրել եղածը: Զօջափած հայքերն էլ գլխաւորապէս վերաբերուում են ծնողական յարաբերութիւններից ծագած այնպիսի դէպքերին, որոնք կարող էին երեւան գալ իբրեւ նորմուտ փաստեր: Տեսնենք, թէ ընտանեկան իրաւունքի այս մասն, ինչպէս է ներկայացուում Դատաստանագրքի մէջ:

Որդիների ու ծնողների ընչական փոխադարձ յարաբերութիւնների մասին ոչ մի բան չենք գտնում, բացի ժառանգութեան հարցերից, որոնք արդէն վերապահուում են ժառանգական իրաւունքին: Ծնողների ու որդիների ընչական յարաբերութիւնների հարցի բացակայութիւնն դիւրին բացատրելի է, ինչպէս կը գուշակէ թերեւս եւ ընթերցողը: Նահապետական ընտանիքի անդամները բացի տնտեսէրից, տան մեծից, որը միակ persona sui iuris է, լիազօր տէրն է ընչքի, սեփականութեան նկատմամբ, մնացեալ անդամները, ուրեմն եւ որդիքը սեփականութեան ոչ մի իրաւունք չունին ընչական հարցերում: Հետեւապէս մնում է շօշափել ծնողների ու որդիների անձնական յարաբերութիւնները, դա էլ այն ծաւալով, ինչ ծաւալով բովանդակում է Դատաստանագրքը:

Չնայած, որ վերը բացատրած պատճառներով շատ հարցեր Միտիթար Գօշը իւր Դատաստանագրքի մէջ ՚ի նկատու չի առնում, բայց եւ այնպէս շօշափած հարցերն էլ հիմնուում են զլիսաւորապէս կրօնական սկզբունքների վրայ:

Հայրերը պարտական են իրենց զաւակներին ուսուցանել եւ «որչաքի ձեռնհաս իցեն, փոյթ առնիցեն», հոգս տանեն նոցա անդի ու զարգացման վրայ, մինչեւ ՚ի կատարման հասակի, այսինքն մինչեւ շահահասութիւնն (II, գլ. 2): Փոխադարձաբար էլ զաւակները պէտք է չ'արհամարհեն իրենց ծնողներին եւ արժանի ու իսկական պատիւ հատուցանեն նոցա (II, գլ. 9): Հակառակ դէպքում, երբ որեւէ կողմը զանցառու է լինում իւր պարտաւորութիւնների մէջ, ըստ Դատաստանագրքի ենթարկուում է նոյմի: Նմանապէս, եթէ որդիքը «անգգամ», գտնուեցին եւ իրենց ծնողներին անարգում են ծնծով, պատժուում են մահուան դատաստանով (II, գլ. 3), որովհետեւ գնաորդելով հօրը, նրանք անարգում են «նովաւ հնաւորակացն» Աստուած: Այսպիսի զաւակների համար Դատաստանագրքի մի այլ տեղում յիշատակուում է, որ նմանապէս «կանոնք լիցին մահու չափ ապաշխարել»: Սակայն թէ որդիք առանց որեւէ դիտարկութեան եւ լոկ երեխայութեան պատճառով էին մեղաւորուած ծնողների առաջ, վերջիններս կարող են ներումն շնորհել: Իսկ երբ այդ մեղապարտութիւնն յանդգնութիւնից ու արհամարանքից է առաջացել, ծնողները իրաւունք ունին հրաժարուել իրենց որդիներից ու սրանց զրկել ժառանգութիւնից: Բայց որդիների զրջման ու մեղայնագրելու դէպքում, ծնողները միայն նոցա ապաշխարութեամբ կարող են վերստին ընդունել (II, գլ. 14): Նոյն վերջին պայմաններն վերապահուում են նաեւ այն բոլոր դէպքերում, երբ որդիքը բամբասեն իրենց հօրը, կամ մօրը (II, գլ. 15):

Ժառանգական ու ընտանեկան իրաւասութեանց առանձնաշնորհումների մէջ անկասկած մեծ գեր է ընկնում անդրանիկ որդու վրայ: Դատաստանագրքը ուշադրութեան է առնում անդրանկութեան իրաւունքը եւ պաշտպանում է կարելի լինող զանցառութիւններից: Երբ զաւակն տէր այրին երկրորդ անգամ կին վերցնի եւ այդ ամուսնութիւնից ունենայ կրկին զաւակ, եւ երբ «վան սիրոյ կրտսերին, կամ «աւառեալ կնոջ վերջոյ (եւ «կամաց առեալ ՚ի վերջին կնոջն») անդրանիկ համարի երկրորդ

ծնունդը, դա ապօրինի է, ուստի եւ լուծուում է ինքն ըստ ինքեան: Այս կանոնն Գաղատա- նագրի համաձայն հաստատուում է նրանով, որ «Տէրն պատուիրեաց տալ զառաջին ծնունդն»: Միմիայն անպիտան վարքի տէր անդրանիկ որ- դուն հայրը կարող է զրկել անդրանկութեան իրաւունքից (II, գլ. ԿԹ):

Գաղատաւանագրի մէջ կայ նաեւ մի յո- գուած, որը մի տեսակ սահմանափակել է աշ- խատում հայրերի իրաւունքը որդոց վրայ, Թուլացնել patria potestas-ի նշանակութիւնը: Եթէ հայրը որեւէ կերպով մեղապարտ է յայ- տարարուում ու դատապարտուում է մահուան պատժի, որդին պատասխանատու չէ հօր յան- ցանքը քաւել՝ հօր փոխարէն գնալ մահուան պատժին ենթարկուելու: Նմանապէս եւ հակա- ոակը. եթէ որդիքն են մահուան դատապար- տուում, «հայրը թէեւ կամիցին վասն զորդին անդրեւոյցանելոյ մեռանիլ» մի մեղքին, այլ մեղքի որդին մահապարտ (II, գլ. ԶԳ):

Սակայն ինչպէս են գոյանում ծնողական ու որդիական յարաբերութիւնները, այսինքն ի՞նչ պայմաններից են նոցա ծագում, այդ հարցի մասին Միթիար Գոջը միանգամայն լուծութիւն է պահպանում:

Արդ տեսնեք, թէ ինչպէս է լուծուում ու վերջանում ծնողական իրաւունքը: Ծնողական պարտականութիւնների կատարումն վերջանում է, ինչպէս վերը յիշել ենք որդու չափահասու- թեամբ: «մինչեւ կատարումն հասակի» (II, ԳԶ): Այս դէպքում, մանաւանդ 'ի նկատի առնելով հայ ընտանիքի նահապետական կազմը, որ- դիներն այնու ամենայնիւ դուրս չեն գալիս հօր իրաւունքից: Եւ փնտրել են ընտանիքի շրջանում, նոյն իսկ պսակուած ատեն: Բայց եւ շատ անգամ երեւի տեղի են ունեցել բաժան- ման դէպքեր, երբ որդիք չափահաս դառնալով, զանազան պատճառներից զրդուած, հեռանում են ընտանիքից, տակաւին իրենց հօր կենդանու- թեամբ: Ուրեմն նրանք դուրս են գալիս հօր իրաւունքի տակից եւ անձնական իրաւունքի ազատ տէր դառնում: Այստեղ ծնողները չպէտք է դէմ լինեն իրենց անհնազանդ որ- դիներին, այլ «որ ինչ եւ հասանէ յընչից իրենաց, տացնն նոցա սիրով եւ նստուցնն զնոսայ ուրոյն» (II, ԳԳ): Ստեպ բաժանութեան դէպքեր տեղի էին ունենում հօր մահուանից յետոյ, երբ հօր իրաւունքը արանով ինքն ըստ ինքեան լուծուում էր ու վերջանում: Այն ատեն հօրից ճիշդած ամբողջ ինչքը բաժանուում

է եղբայրների մէջ, որոնք արդէն անհասակն ազատ իրաւունքներ են ձեռք բերում հաս- րակական յարաբերութիւնների մէջ (II, ՃԲ):

Գ.

Հսգ-բարձութիւն եւ խնամակալութիւն:

Ինչպէս նախընթաց գլխում տեսնեք, ծնողների պարտականութիւնն է հօգ տանել իրենց զաւակների նկատմամբ: Սակայն երբ ծնողները վաղաժամ մեռնում են, այն ատեն զաւակները պէտք է զուրկ լինէին իրենց անձնա- կան ու ընտանեան իրաւունքի պահպանութիւնից, Այսպիսի դէպքերում օրէնսդրութիւնն օգնու- թեան է համարում, նշանակելով այն անձնաց վրայ, որոք անկարող են ինքեանք կառավարել իրենց գործերը եւ իրագործել իրենց իրաւունք- ները, յատուկ հոգ-բարձութիւն: Միթիար Գոջ էլ ուշադրութեան է առել այս հարցը, թէեւ իւր սովորութեան համեմատ նոյնպէս թեթեւակի ու անորոշ: Գաղատաւանագրի մէջ ընդունուած է երկու տեսակ իրաւաբանական հաստատու- թիւն. հոգ-բարձութիւն, նման հռոմէական tutela-ին (Vormundschaft, опека) եւ խնա- ակալութիւն, հոմանիշ հռոմէական cura կամ curatio (Pflegschaft, попечительство):

Հոգաբարձութեան ենթարկուում էին ան- չափահաս անձեր ծնողների մահուամբ, հոգա- բարձութեան ներքոյ էր գրուում երկու ամու- սիւններից մէկի մահուամբ նաեւ ընտանեկան գոյքը, նոյն իսկ անզաւակութեան դէպքերում: Հօր մահուամբ հոգաբարձութեան իրաւունքը գրուում էր կամ նրա ազգականներին կամ նրա կնոջը: Վերջին դէպքում մարդը վկաների ներկայութեամբ յանձնուում էր հոգաբարձութեան իրաւունքը իւր կնոջը, որ իւր պարտաւորու- թիւնը պետք էր 'ի կատար ամէր մեռած աս- մուսնու ծնողների ու եղբայրների օգնութեամբ: Նմանապէս երբ կինն էր վախճանում եւ հո- գաբարձութեան իրաւունքը նա վտաճանում էր յանձնել իւր ամուսնուն, վերջինս պար- տաւոր էր իւր իրաւունքը գործարդել կնոջ ծնողների ու եղբայրների օգնութեամբ (I, ՃԳ):

Խնամակալութիւնն առաջագրւում է իբրեւ հոգաբարձութեան բաղկացուցիչ մի մաս, որ գործադրուում է զլիաւորապէս արդէն հասակն առած անձերի վերաբերմամբ, որոնք որ եւ բնական պատճառներով անկարող են իրենց գոյքը կառավարել ու իրենց անձնական իրա- ւունքն եւ իրաւունակութիւնն արտայայտել:

բայց Միխիթար Գօշը աւելի հեռու է գնում իւր որդւոյն ձեռքի մէջ: Ֆիզիկական ու հոգեպէս տկար ժառանգները, "որոնք բնաւ չունին միտս եւ իմացութեամբ", մի կողմն էին դառուում յօգուտ հետեւեալ ազգակցական առօրեաներին, որոնք պարտաւոր էին ցմաջ էլնա՝ դանդաղ ու պահպանել այդ ժառանգազուրկներին: Իսկ այն դէպքերում, երբ Ֆիզիկական ու հոգեպէս փնասուած ժառանգը, "չեցէ անզգայեալ կամ բնաւին ապականեալ", անդամալոյծները, որոնք "իմաստուն" են եւ այլն, սրբաբէ չեն զրկուած ժառանգութիւնից, այլ լիակցօր տնր են դառնում եւ, իրենց օգնականներ ունենալով, կառավարում են սեփական սատարածքը: Այդ օգնականների անհրաժեշտութիւնն միշտ ներկայանում է այստեղ իբրեւ ինամակալութեան մի երեւոյթ (II, 42):

(Հարսնականի)

Եւ ՍՄՍՈՂԷԼԵՆՆ



ՅՈՒՅԱԿ ՉԵՌԱԳՐԱՅ ԹԱՐԻԻԶԻ

Յոնգակ ձեռագրաց Մ. Աստուածածին եկեղեցւոյն
Հայայի կամ Բերդաթաղի:

(Հարսնականի)

64.

ՍԻԵՏԱՐԱՆ
ՌՃԿՐ = 1713:

ԹՈՒՂԹԻՔ 316, - ՄՆԺՈՒԹՈՒՆԻՆ՝ 22X16X5 սմ.²
- ԳՐՈՒԹՈՒՆ՝ մաքուր, երկսիւն, իւրաքանչիւրը 15X5 սմ.: - ԳԻՐ՝ բոլորգիւր. թանաք՝ սեւ, վերնագրերը, սկզբնատողներն ու սկզբնատողները կարմիր, ոսկեգոծ, կապտոյ կամ վարդագոյն. տող 20-22. - ՆՈՒԹ՝ աստուծոյ լուս թուղթ: - ԿԵԶՄ՝ ըստ յիշատակարանին առաջ եղած է արծաթապատ, այժմ միայն կաշեպատ էր, բայց նոր ոճով: - ՄՄԳԿԼԵԹԻՆ՝ ՊԱՇԳՐԱՆԱԿ չկայ: - ՆՍԻԳԱՄԱՆԷ՝ լաւ: - ԴԱՏԱՆԻ ԹՈՒՂԹ՝ ընդամենը 20 նրբ. մծծ մասը պատկերներուն նստիկ ներքը: - ԼՈՒՄԼՆԱՆԵԶՆԻՐԻԷ՝ եւ պատկերներ շատ կան. զրեւը յատկապէս ուշադրութիւն դարձուցնէր ի իստ ամենայնի մըտքը զրութեամբ եւ պատկերներով ծոխ Աւետարանի վր ընծայելու. ըստ այսմ՝ սեռապիսի զարդարումն է 18 մծծադիր պատկերներով, 14 խորաններով, 76 լուսանցաբարձրով, 142 լուսանցիի փոքր պատկերներով եւ 208 թղշնագրերով, ընդ ամենի 455 կտոր պատկեր կամ զարդ. ասանցմէ մծծադիր պատկերները թէւս այնչափ յաջող չեն, բայց միանգոյք մասնաւոր փոքր լուսանցապատկերները քաւական յաշիւ ու նուրբ են: - ԳՐԻԶ՝ եղիւ մարզուանցի. տեղ՝ Եւղիկիս. թուական ՌՃԿՐ = 1713. տեղ՝ Ոսկան աստուպատից: - Հանապիսի Մարտիրոս մէջ գնած է քողորականաց դպրոցի տեսու Dr. Wright, զոր յետոյ նստիւած է նոյն դպրոցին գրա-

դարանին. ասկէ ալ գնած եւ այժմ՝ ծնուագրիս սեւագրական տէքն է նոյն դպրոցին ուսուցիչներին վաճառ թաւագրան:

Մատենան է Աւետարան, որ էր պարսեանէ. էջ 2բ—15ա տնօրէնական մծծադիր պատկերներ. էջ 16ա՝ իսկ յ խորանաց պատճառ. նստի երկրորդ յեղիպատի խնդրեաց յեւսեւե... էջ 16բ—25ա՝ Եւսեւի կարպիւսանո, կանոններու մանրամասն բացատրութիւնը եւ խորաններու տակ կանոններ. էջ 26ա—27բ՝ Նախագրութիւն եւ ցանկ Մատեթնոի. էջ 29ա—101բ Աւետարան Մատեթնոի. էջ 102ա—103ա՝ Նախագրութիւն եւ ցանկ Մարկոսի. էջ 104ա—158ա՝ Մարկոս. էջ 158բ—160ա՝ ցանկ Ղուկասո. էջ 161ա—248ա Ղուկաս. էջ 248ա—բ՝ ցանկ Թովհանեւ. էջ 250ա—312բ՝ Թովհանեւ. էջ 313ա—316ա՝ Թէրատաւարան:

ԻԻՇԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԷ. էջ 1ա՝ 1860—67 թուերէն ընտանեկան յիշատակութիւններ քանի մը աղայց ծննդեան: էջ 1բ. Library of the boys Memorial School Tabriz from John N. Wright.

ԳԻՆ՝ սոր յիշատակ (էջ 813ա—816ա). փառք եւ պատիւ անկէք եւ անկատարանն մծ. անքն եւ անհասանելի. համազօրական երրորդութիւնն հայր եւ որդին եւ քր հոգին մի կամք. մի տէրութիւն. մի՛ իշխանութիւն եւ մի բնութիւն արարել բոլորէ. որդ բանիւ երկինք հաստատեցան Մշտնջենաբաւ աղբիւր յերկրի բոլիւալ, յորմէ բաժանեցան չորս առաջ յորբաջանեւ առաւարտագի վտակը լրբից գեղաց. որբուցանելով զեղեմեան զնաւսն, զարդաւորա՛ զոնմա. հական գրախոյն տեղոցի զգնեղիկութիւն զաւաճացանել զմծաստեղծ մարդոյն զանաբանն աւրաբանելով զքառանկթ բնութիւնն անուշահասութիւնն բազմածաղիկ քաղցրահամ՝ գեղեցկատեղի պարզէն անտեսանելիք եւ անխմանալիք հրեշտակոց զոր սերմոյրէքն եւ քերովրէք թէթեւածածուկ դիմը: Դարիմաց եւ առաջատես մարգարէիցն գունգըքն իբրեւ ընդ հայրիկ օրինակաւ տեսնալ զքեզ ի վերայ լրբեղբերպեան կենդանեացս մարգարտպէս գթալով ի մարդկային բնութիւնս. զալով ի մը կերպաւորութիւնս բժշկելով զնեղաթիւր ազգս մարգիւն. բզգարտաւոր եւ զվերաւորեալ զվեցերորդի աւաւըն օտեղնուանն. ի եթէնիկ իշխանական հրամանագ զգի ժանեայն կանգնեցն բնութին եւ մարգարտական բժշկութեամբ: Իսկ երանելի առաքելոցն գունգըքն ականատեղ եւ սպասաւորք եղէն բանին կենալ, որդէս լաւա՛ նոյնից եւ տեղին զոր արդարքն եւ մարգարէն ցանկացան տեսնել եւ ոչ տեղին իշխանութիւն առին բժշկելոյ զտես եւ հանելոյ զնաւ. լուսաւորեալ եռթմարեան ընթահը նը առաջանին. զոն տեղի առնելոյ մի. եւ զոն առն եւ գլխուն յաթոս:

Ո՛՛՛՛ Դըսնէլի եւ անդամանի ո՛՛ իւրք աստուածութեանն որ զվերաւորան քարզս առնելով յառաւ յարիւրէն իւրմ՝ աստուածութեանն բոլիւալ բժանական երկոտասան աղբին արբան բաժանելով զլուրեքեան վտակս՝ շլլորեքեան աւետարտեւն՝ արբաւանելով ընդաստանին. զվերաւորն պղծաբարեւ առնելով որդէս ասէ մծծ դաւիթ եւ բարբն եռային. փնն իմէ՛ մարգարէն որդէս անդամանին ծաղկեցին եւ Մո որդէս մթնին պազլից ի տանն մի յաւապոս արբա-